

## **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

### **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԻՆԱՆՄԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ**

#### **1. Ընդհանուր դրույթներ**

##### **1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ավագ մասնագետ (այսուհետ՝ Ավագ մասնագետ) (ծածկագիրը՝ 22-4-24.2-ՄՅ-1)

##### **1.2. Ենթակա և հաշվետու է**

Ավագ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

##### **1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից կամ ավագ հաշվապահներից մեկը:

##### **1.4. Աշխատավայրը**

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան

#### **2. Պաշտոնի բնութագիրը**

##### **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. իրականացնում է Կոմիտեի ապրանքանյութական արժեքների հաշվառման աշխատանքները.
2. իրականացնում է Կոմիտեի վարչական շենքի պահպանման աշխատանքները և հսկողություն սահմանում սանիտարական վիճակի նկատմամբ.
3. իրականացնում է Կոմիտեում օգտագործվող ջրի, էլեկտրաէներգիայի, հեռախոսակապի և վառելիքի նկատմամբ հսկողություն.
4. իրականացնում է հսկողություն Կոմիտեի գույքի նկատմամբ.
5. իրականացնում է Կոմիտեում անցկացվող գույքագրման աշխատանքները.
6. մասնակցում է Կոմիտեին ավտոտրանսպորտային միջոցներով ապահովման, դրանց շահագործման, վերանորոգման, տեխնիկական սպասարկման կազմակերպման հետ կապված աշխատանքներին:

##### **Իրավունքները՝**

- ծառայողական պարտականությունները կատարելու համար Կոմիտեի ստորաբաժանման աշխատողներից ժամանակին ստանալ անհրաժեշտ ամբողջական տեղեկատվություն, հիմնավորումներ, նյութեր ու փաստաթղթեր.

- մասնակցել Վարչության առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին:

### **Պարտականությունները`**

- փաստաթղթավորել ու հաշվառել պահեստից դուրս գրված ու ստորաբաժանումներին հանձնված ապրանքները.
- կազմել փաստաթղթեր, տեղեկանքներ ու հաշվետվություններ.
- անցկացնել գույքագրման աշխատանքներ.
- հավաքագրել և համապատասխան ստորաբաժանմանը տրամադրել Կոմիտեի ավտոմեքենաների շահագործման հետ կապված անհրաժեշտ տվյալները:

## **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

### **3.1. Կրթությունը, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում` մեկ տարվա աշխատանքային ստաժ:

### **3.4. Անհրաժեշտ կոմպլեքսներ**

#### **Ընդհանրական կոմպլեքսներ**

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարչություն

#### **Ընտրանքային կոմպլեքսներ**

1. Փոփոխությունների կառավարում
2. Փաստաթղթերի նախապատրաստում

## **4. Կազմակերպական շրջանակը**

### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորություններ**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման շրջանակներում:

### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: